https://doi.org/10.46991/S&L/2020.87.057

ՊՈՌՆԿՈՒԹՅԱՆ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԻ ԻՐԱՎԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԻ ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾՄԱՆ ՈՐՈՇ ՀԱՐՑԵՐ

Գևորգ Իսրայելյան
ՀՀ ոստիկանության կրթահամալիրի ակադեմիայի քաղաքացիական իրավունքի և քաղաքացիական դատավարության ամբիոնի պետ, իրավաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ, ոստիկանության փոխգնդապետ

Գործնականում հաճախ դժվարություններ են առաջանում պոռնկության կանխարգելման, հայտնաբերման և բացահայտման, պատասխանատվության ենթարկելու գործառույթները իրականացնելու ընթացքում: Բացի այդ, իրականում կան արարքներ, որոնք ունեն հասարակական որոշակի վտանգավորություն, սակայն մինչ այժմ դրանց համար պատասխանատվության նորմեր նախատեսված չեն: Այս խնդիրների լուծման նպատակով առաջարկում ենք.

1. Փոփոխել պոռնկությամբ զբաղվելու օրենսդրական հասկացությունը

Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի (ընդունվել է 1985 թվականի դեկտեմբերի 6-ին, այսուհետ՝ Օրենսգիրք) հոդված 179[1]-ի 1-ին մասում նախատեսել հետևյալ նկարագրող դիսպոզիցիան. «Պոռնկությամբ զբաղվելը՝ նույն կամ հակառակ սեռի ներկայացուցիչներին պարբերաբար, անկանոն, կամավոր սեռական բնույթի ծառայություններ մատուցելը (այդ թվում՝ տեղեկատվական տեխնոլոգիաների և հեռահաղորդակցության միջոցներով)՝ նախապես պայմանավորված նյութական բնույթի վարձատրություն ստանալու նպատակով՝...»:

Խնդիրն այն է, որ Օրենսգրքի՝ պոռնկության համար պատասխանատվություն նախատեսող հոդված 179[1]-ի 1-ին մասի դիսպոզիցիան պարզ է. բովանդակում է միայն իրավախախտման անվանումը, որի պատճառով իրավակիրառ պրակտիկայում պոռնկությամբ զբաղվելու որակման և ապացուցման հարցերում առաջանում են խնդիրներ: Խնդրի լուծման համար մեր կողմից առաջարկվող դիսպոզիցիայի տարբերակում շեշտվում են հետևյալ հատկանիշները.

1) Սեքսուալ բնույթի ծառայություններ մատուցելը

Սեքսուալ բնույթի ծառայությունները նպատակաուղղված են հաճախորդի սեռական ցանկության գրգռմանը, բավարարմանը: Դրանք կարող են դրսևորվել ինչպես սեռական հարաբերության մեջ մտնելով, այնպես էլ սեռական բնույթի այլ գործողություններ (կունիլինգուս, անիլինգուս, այլասերված մերսում և այլն) կատարելով[1]: Բացի այդ, կարծում ենք, որ սեքսուալ բնույթի գործողությունները միշտ չէ, որ ենթադրում են ֆիզիկական շփում: Այսպես.

ա) մարմնավաճառի կողմից այլասերված կեցվածքի ընդունումը կարող է հաճախորդի սեռական ցանկությունը գրգռել, բավարարել ինչպես պասիվ (հաճախորդը միայն նայում է), այնպես էլ ակտիվ ձևով (հաճախորդը նայելով զբաղվում է ձեռնաշարժությամբ),

[1] Ընդ որում, սեքսուալ բնույթի ծառայությունները պետք է մատուցվեն կամավոր: Մարմնավաճառի կամքին հակառակ՝ վերջինիս կամ այլ անձի նկատմամբ բռնություն գործադրելով կամ դա գործադրելու սպառնալիքով կամ մարմնավաճառի անօգնական վիճակն օգտագործելով նրա հետ սեռական հարաբերություն ունենալու կամ սեքսուալ բնույթի գործողություններ կատարելու դեպքում պատասխանատվություն կառաջանա Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի դրույթներին համապատասխան:

բ) սեքսուալ բնույթի ծառայությունները կարող են մատուցվել նաև տեղեկատվական տեխնոլոգիաների և հեռահաղորդակցության միջոցներով. տարբեր սոցիալական ցանցերի ուսումնասիրությունը ցույց տվեց, որ պոռնկությամբ զբաղվող բազմաթիվ անձինք ծառայություններ են մատուցում վիրտուալ տարբերակով, տեսազանգի կամ ձայնային հաղորդագրությունների միջոցով, մարմնի ինտիմ հատվածների լուսանկարների փոխանցմամբ և այլ ձևերով:

2) Պոռնկությամբ զբաղվելու պարբերականությունը

Պոռնկությամբ զբաղվելու մասին կարող է խոսք լինել միայն այն դեպքերում, երբ նման գործունեությունը պարբերական բնույթ ունի: Անձը պոռնկությամբ զբաղվում է որպես արհեստ: Եթե անձը, չունենալով պոռնկությամբ պարբերաբար զբաղվելու նպատակ, վարձատրության դիմաց մեկ անգամ այլ անձի հետ կատարում է սեքսուալ բնույթի գործողություն, ապա դա չի կարող համարվել պոռնկությամբ զբաղվել, քանի որ «զբաղվել» բառը ենթադրում է գործունեության տևողականություն և պարբերականություն (երեք կամ ավելի անգամ): Միայն այդ դեպքում կարելի է խոսել գործունեության տվյալ տեսակի մեջ անձի մասնագիտացման մասին[1]: Ընդ որում, սեքսուալ բնույթի ծառայությունները մատուցվում են տարբեր անձանց, այլ կերպ ասած՝ պոռնկությամբ զբաղվելը ենթադրում է սեռական անկանոն կապերի հաստատում:

3) Պոռնկությամբ զբաղվելու սուբյեկտների շրջանակը

Մասնագիտական գրականության մեջ և իրավակիրառ պրակտիկայում միասնական տեսակետ չի ձևավորվել պոռնկությամբ զբաղվելու սուբյեկտի վերաբերյալ: Հաճախ բարձրաձայնվում է այն կարծիքը, թե պոռկությամբ զբաղվում են միայն կանայք[2]: Իրականում պոռնկությամբ զբաղվում են նաև արական սեռի ներկայացուցիչներ (Հայաստանում մեծ մասամբ տրանսֆեստիտները, տրանսեքսուալները): Ինչպես վերը նշվեց, պոռնկությամբ զբաղվելու՝ մեր կողմից առաջարկվող օրենսդրական հասկացության մեջ քննարկվող իրավախախտման սուբյեկտ են դիտվում ինչպես կանայք, այնպես էլ՝ տղամարդիկ: Բնականաբար, սուբյեկտ լինելու համար համապատասխան անձը պետք է լինի մեղսունակ, և նրա տասնվեց տարին լրացած լինի մինչև զանցանք կատարելու պահը:

Իրավակիրառ պրակտիկայի համար կարևոր նշանակություն ունի նաև անչափահասի կողմից պոռնկությամբ զբաղվելու որակման հարցը: Ինչպես նշվեց, վարչական պատասխանատվության տարիքը տասնվեց տարեկանն է: Օրենսգրքի 178-րդ հոդվածի դրույթների վերլուծությունից բխում է, որ 16 տարին չլրացած անչափահասի կողմից վարչական իրավախախտումներ կատարելու (այդ թվում՝ պոռնկությամբ զբաղվելու) դեպքում պատասխանատվություն կրում են ծնողները կամ նրանց փոխարինող անձինք:

Այլ է խնդիրը, երբ պոռնկությամբ զբաղվում է 16-18 տարեկան անչափահասը: Այս խնդրին անդրադարձ կկատարվի հաջորդիվ:

4) Վարձատրություն ստանալը՝ որպես սուբյեկտիվ կողմի հատկանիշ

Որպես սուբյեկտիվ կողմի պարտադիր հատկանիշ դիտարկում ենք նպատակը, այն է՝ անձը սեքսուալ բնույթի ծառայություններ է մատուցում վարձատրություն ստանալու նպատակով: Նյութական վարձատրությունը կարող է լինել տարբեր ձևերի՝ գումար, զարդեր, սննդամթերք և այլն: Այն կարող է լինել եկամուտի և՛ որպես հիմնական, և՛ որպես լրացուցիչ աղբյուր:

Պետք է նկատի ունենալ, որ, ի տարբերություն սեռական հարաբերությունների ոլորտում թեթևամիտ կամ անբարոյական վարքագծի, մարմնավաճառությունը բնութագրվում է նաև այնպիսի հատկանիշով, ինչպիսին է սեքսուալ բնույթի ծառա-

---

[1] Տե՛ս **Մարկոսյան Մ.**, էրոտիկ մերսու՞մ, թե՞ քողարկված պոռնկություն // Քննիչ, **N 4 /**2016, էջ 71:

[2] Տե՛ս օրինակ՝ Криминология: Учебник для вузов /под ред. проф. В. Д. Малкова – 2 - е изд., перераб. и доп. – М.: ЗАО «Юстицинформ», 2006, էջ 512:

յությունների դիմաց վճարման նախնական համաձայնությունը: Այլ կերպ ասած՝ այն անձը, որը հաճախ է փոխում սեռական զուգընկերներին, նրանցից ստանում է նվերներ, նրանց հետ անցկացնում է իր ազատ ժամանակը, մարմնավաճառ չէ: Սեռական կապերի մեջ անկանոն, պարբերաբար, կամավոր մտնելը, ինչպես նաև սեռական բնույթի ծառայություններ մատուցելու համար վճարի նախնական պայմանավորվածությունը պոռնկությամբ զբաղվելու հատկանիշներ են[1]: Մեր կարծիքով, նախնական պայմանավորվածություն նշանակում է մինչև սեքսուալ բնույթի ծառայություն մատուցելը համաձայնության գալ վճարի ձևի ու չափի մասին: Արարքի որակման համար մարմնավաճառի կողմից վճարը ստանալու պահը (մինչև ծառայություն մատուցելը կամ դրանից հետո) և վճարի չափն իրավաբանական նշանակություն չունեն:

2. Լուծել պոռնկությամբ զբաղվող 16-18 տարեկան անձանց վարչական պատասխանատվության ենթարկելու իրավական խոչընդոտների վերացման խնդիրը

Առաջարկում ենք Օրենսգրքի.

1) 13-րդ հոդվածի 1-ին մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «16 տարին չլրացած անձի կողմից սույն օրենսգրքով նախատեսված արարք կատարելու դեպքում պատասխանատվություն կրում է նրա ծնողը կամ փոխարինող անձը»,

2) 13-րդ հոդվածի 2-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «16-18 տարեկան անչափահասները կատարած վարչական իրավախախտումների համար պատասխանատվություն կրում են ընդհանուր հիմունքներով»,

3) ուժը կորցրած ճանաչել 13-րդ հոդվածի 3-րդ մասը և 221-րդ հոդվածը:

16 տարին լրացած լինելու պարագայում պոռնկությամբ զբաղվելու համար պատասխանատվություն պետք է կրի փաստացի խախտում կատարողը: Պոռնկությամբ զբաղվելու համար վարչական պատասխանատվության ենթարկող սուբյեկտը ոստիկանությունն է: Կատարված ուսումնասիրության արդյունքում պարզ դարձավ, որ ոստիկանությունը նշված խախտման համար 16-18 տարեկան անձանց պատասխանատվության ենթարկելու իրավասություն չունի: Խնդիրն այն է, որ Օրենսգրքի 13-րդ հոդվածի համաձայն՝ վարչական իրավախախտում կատարելու դեպքում 16 տարին լրացած անչափահասների նկատմամբ կիրառվում են Անչափահասների գործերի հանձնաժողովների կանոնադրությամբ նախատեսված միջոցները, բացառությամբ 53-րդ, 123-րդ, 131-րդ, 160-րդ, 173-րդ, 182-րդ և 13-րդ հոդվածով վկայակոչված այլ հոդվածներով նախատեսված զանցանքներ կատարելու դեպքերի, երբ նրանք ենթարկվում են վարչական պատասխանատվության ընդհանուր հիմունքներով: Հաշվի առնելով կատարված իրավախախտման բնույթն ու կատարողի անձը՝ գործերը (բացի 182-րդ հոդվածով նախատեսված իրավախախտումներ կատարելու դեպքերի) կարող են հանձնվել, իսկ 53-րդ հոդվածով նախատեսված զանցանք կատարելու դեպքում, որպես կանոն, ենթակա են հանձնման Անչափահասների գործերի հանձնաժողովների քննությանը: Այսպիսով, առաջանում է փակուղի, քանի որ Անչափահասների գործերի հիշատակված հանձնաժողովները վաղուց չեն գործում, ինչի արդյունքում ոստիկանության ծառայողները գործնականում կազմում են համապատասխան նյութերը, դրանք ուղարկում տեղական ինքնակառավարման մարմնի ընտանիքի, կանանց և երեխաների պաշտպանության ստորաբաժանում կամ բավարավում են բանավոր նախազգուշացմամբ: Մինչդեռ տեղական ինքնակառավարման մարմինների ընտանիքի, կանանց և երեխաների պաշտպանության ստորաբաժանումներն իրավասու չեն վարչական պատասխանատվության միջոցներ կիրառել:

Նշված խնդիրը կարող է լուծվել նաև հետևյալ այլընտրանքային տարբերակներով.

---

[1] Տե՛ս **Шалагин А. Е.** Проституция как социально-негативное явление и ее общественная опасность //Актуальные проблемы экономики и права. М., 2012, № 1, էջ 295:

- Օրենսգրի 13-րդ հոդվածի 2-րդ մասում և 221-րդ հոդվածում վկայակոչել նաև 179[1] հոդվածը, ինչով ոստիկանությունը հնարավորություն կունենա խախտում կատարելու դեպքում պատասխանատվության ենթարկել նաև 16-18 տարեկան անձանց, կամ

- տեղական ինքնակառավարման մարմինների ընտանիքի, կանանց և երեխաների պաշտպանության ստորաբաժանումների համար նախատեսել 16-18 տարեկան անչափահասներին վարչական պատասխանատվության ենթարկելու լիազորություն:

3. Վարչական պատասխանատվություն սահմանել սոցիալական կայքերում վճարովի սեքսուալ բնույթի ծառայություններ մատուցելու վերաբերյալ հայտարարություններ հրապարակելու համար

Առաջարկում ենք Օրենսգիրքը լրացնել 179.2 հոդվածով.

«Հոդված 179.2 Սոցիալական կայքերում վճարովի սեքսուալ բնույթի ծառայություններ մատուցելու վերաբերյալ հայտարարություններ հրապարակելը

1. Սոցիալական կայքերում վճարովի սեքսուալ բնույթի ծառայություններ մատուցելու վերաբերյալ հայտարարություններ հրապարակելը՝

առաջացնում է նախազգուշացում կամ տուգանքի նշանակում՝ նվազագույն աշխատավարձի … չափով:

2. Սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված խախտումը կրկին կատարելը՝ վարչական տույժ նշանակելուց հետո մեկ տարվա ընթացքում՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ նվազագույն աշխատավարձի … չափով»:

Ուսումնասիրությունը ցույց տվեց, որ գրեթե բոլոր սոցիալական կայքերում պոռնկությամբ զբաղվող անձինք ունեն անձնական էջեր, որոնց միջոցով գովազդում են իրենց ծառայությունները: Մասնավորապես, անձնական էջերը տեղեկատվություն են պարունակում մարմնավաճառի մականվան, տարիքի, նրա կողմից մատուցվող ծառայությունների բնույթի և տեսակների, վճարի չափի մասին, երբեմն այդ էջերում տեղադրված են լինում նրանց իրական լուսանկարները և նրանց մասնակցությամբ տեսահոլովակներ: Այդ գործողությունները նպաստում են պոռնկությամբ զբաղվող անձի ծառայություններից օգտվողների շրջանակի ընդլայնմանը:

4. Վարչական պատասխանատվություն սահմանել պոռնկությամբ զբաղվող անձի ծառայություններից օգտվելու համար

Առաջարկում ենք Օրենսգիրքը լրացնել 179.3. հոդվածով.

«Հոդված 179.3 Պոռնկությամբ զբաղվող անձի ծառայություններից օգտվելը

1. Պոռնկությամբ զբաղվող անձի ծառայություններից օգտվելը (այդ թվում՝ տեղեկատվական տեխնոլոգիաների և հեռահաղորդակցության միջոցներով)՝

առաջացնում է տուգանքի նշանակում նվազագույն աշխատավարձի … չափով:

2. Սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված արարքը կրկին կատարելը՝ վարչական տույժ նշանակելուց հետո մեկ տարվա ընթացքում՝

առաջացնում է տուգանքի նշանակում նվազագույն աշխատավարձի … չափով»:

Արտասահմանյան որոշ երկրներում (օրինակ՝ Շվեդիա, Նորվեգիա) արդեն իսկ ներդրվել է պոռնկությամբ զբաղվողի ծառայություններից օգտվող անձի վարչական պատասխանատվության ինստիտուտը, ինչը, անշուշտ, ունի կանխարգելիչ նշանակություն՝ վարչական հարկադրանքի կիրառման սպառնալիքի ազդեցությամբ: Որոշ պետություններում (օրինակ՝ Ռուսաստանի Դաշնություն) անգամ առաջարկվել է տարբերակված պատասխանատվություն սահմանել պոռնկությամբ զբաղվող անձի ծառայություններից օգտվող ամուսնացած և չամուսնացած անձանց համար՝ այն հիմնավորմամբ, թե ամուսնացածների կողմից նշված խախտումը կատարելն ավելի վտանգավոր է, քանի որ պոռնիկին վճարվում է ընտանեկան

բյուջեի հաշվին, վտանգ կա մյուս ամուսնուն վեներական հիվանդությամբ վարակելու[1]:

Հայաստանի Հանրապետությունում պոռնկությամբ զբաղվող անձի ծառայություններից օգտվելու համար վարչական պատասխանատվություն սահմանելու պարագայում որոշակիորեն կնվազի պոռնկությամբ զբաղվողների, սեռական բնույթի ծառայություններից օգտվողների քանակը: Իր հերթին կպակասեն սեռական բնույթի ծառայություններից օգտվելու հնարավոր հետևանքները, օրինակ՝ վեներական հիվանդությունների տարածումը:

5. Պոռնկությամբ զբաղվելու համար պատասխանատվություն սահմանող հոդվածի բացարձակ որոշակի սանկցիաները փոփոխել հարաբերական որոշակի կամ այլընտրանքային սանկցիաներով, առաջարկվող իրավախախտումների համար նախատեսել հարաբերական որոշակի կամ այլընտրանային սանկցիաներ

Գործող Օրենսգիրքը վարչական տույժ նշանակելիս հաճախ հնարավորություն չի տալիս գործնականում անհատականացնել պատասխանատվությունը, գնահատել և կիրառել պատասխանատվությունը ծանրացնող ու մեղմացնող հանգամանքները, քանի որ բազմաթիվ խախտումների համար նախատեսված են բացարձակ որոշակի սանկցիաներ: Այսպես, Օրենսգրքի հոդված 179[1]-ի 1-ին և 2-րդ մասերի սանկցիաները բացարձակ որոշակի են, նախատեսում են վարչական տույժի մեկ տեսակ և մեկ չափ: Նշված խնդրի լուծման համար առաջարկում ենք 179[1] հոդվածի սանկցիաները դարձնել հարաբերական որոշակի կամ այլընտրանքային, առաջարկվող իրավախախտումների համար նախատեսել հարաբերական որոշակի կամ այլընտրանքային սանկցիաներ: Նման պարագայում տույժ նշանակելիս վարույթ իրականացնող մարմինը հնարավորություն կունենա մեղմացնել կամ խստացնել պատասխանատվությունը, նշանակել արդարացի վարչական տույժ:

6. Փոփոխություն և լրացում կատարել «Հայաստանի Հանրապետության ոստիկանության համայնքային ոստիկանության գործունեության կազմակերպման կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի օգոստոսի 18-ի N 1233-ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» ՀՀ կառավարության 06.11.2014թ. N 1254-Ն որոշման մեջ

Առաջարկում ենք նշված որոշման հավելվածի 31-րդ կետը փոփոխել և լրացնել հետևյալ խմբագրությամբ. «… Հսկողության ընթացքում սույն կարգի 26-րդ կետի 2-րդ, 3-րդ, 5-րդ, 6-րդ և 8-րդ ենթակետերում նշված անձանց վարքագծի և ապրելակերպի մասին քարտում կատարվում են նշումներ յուրաքանչյուր ամիս, իսկ 7-րդ ենթակետում նշված անձանց վարքագծի և ապրելակերպի մասին՝ յուրաքանչյուր շաբաթ»:

Հավելվածի 31-րդ կետը սահմանում է. «Սույն կարգի 26-րդ կետի 2-րդ, 3-րդ, 5-րդ, 6-րդ, 7-րդ[2] և 8-րդ ենթակետերում նշված անձինք հաշվառվում են ցուցակով: Նրանց համար կազմվում են հսկողական քարտեր: Հսկողական քարտին տրվում է միասնական հաշվառման մատյանի հերթական համարը: Հսկողության ընթացքում նշված անձանց վարքագծի և ապրելակերպի մասին յուրաքանչյուր ամիս քարտում կատարվում են նշումներ»:

Այստեղ առկա է երկու խնդիր: Նախ, «յուրաքանչյուր ամիս քարտում կատարվում են նշումներ» արտահայտությունն իրավակիրառ պրակտիկայում հաճախ մեկնաբանվում է որպես հաշվառման մեջ գտնվող անձի վարքագծի և կենսակերպի՝ ամսական մեկ անգամ ստուգում: Իրականում գործող իրավակարգավորումը նման ենթատեքստ չի պարունակում: Հաշվառման մեջ գտնվող անձի վարքը և կենսաձևը պետք է ստուգվեն ամսվա ընթացքում մեկից ավելի անգամ՝ համապատասխան նշումը կատարելով

---

[1] Տե՛ս Инициатива Олега Михеева. Клиентов проституток накажут рублем и трудом // https://iz.ru/news/588688 (վերջին մուտք՝ 13.08.2020):

[2] 7-րդ ենթակետում նշված են պոռնկությամբ զբաղվողները:

ամիսը մեկ անգամ: Ապա, ինչպես վերը նշվեց, պոռնկությամբ զբաղվելը ենթադրում է հակահիրավական գործունեության պարբերականություն, այն, որպես կանոն, պոռնիկի եկամտի մշտական աղբյուրն է: Ըստ այդմ, կարծում ենք՝ նպատակահարմար կլինի ուժեղացնել վերահսկողությունը հաշվառման մեջ գտնվող պոռնիկների վարքի և կենսաձևի նկատմամբ, ակտիվացնել անհատական կանխարգելիչ աշխատանքները, քարտերում նշումները կատարել յուրաքանչյուր շաբաթ:

Ամփոփելով վերոգրյալը՝ նշենք, որ մեր կողմից առաջարկվող օրենսդրական փոփոխությունները և լրացումները հնարավորություն կտան իրավաբանական ճիշտ գնահատական տալ պոռնկությամբ զբաղվելու դեպքերին, որոշակիացնել պոռնկությամբ զբաղվելու վերաբերյալ գործերով ապացուցման ենթակա հանգամանքները, գնահատել վարչական պատասխանատվությունը ծանրացնող և մեղմացնող հանգամանքները, նշանակել արդարացի վարչական տույժ:

НЕКОТОРЫЕ ВОПРОСЫ СОВЕРШЕНСТВОВАНИЯ ПРАВОВЫХ ОСНОВ БОРЬБЫ С ПРОСТИТУЦИЕЙ

Геворг Исраелян
Начальник кафедры гражданского права и гражданского процесса Академии образовательного комплекса полиции РА, кандидат юридических наук, доцент, подполковник полиции

Статья посвящена некоторым проблемам совершенствования правовых основ борьбы с проституцией. Предложения автора по поводу изменений и дополнений в законодательстве, регламентирующих борьбу с проституцией, создадут предпосылки для правильной квалификации вышеуказанного правонарушения, раскрытия обстоятельств, подлежащих доказыванию, оценки обстоятельств, отягчающих и смягчающих ответственность, назначения справедливого административного наказания.

SOME ISSUES OF IMPROVING THE LEGAL BASIS FOR COMBATING AGAINST PROSTITUTION

Gevorg Israyelyan
Head of the Chair of Civil law and Civil Procedure at the Academy of the Educational Complex of Police of the RA, Police Lieutenant colonel, Candidate of Legal Sciences, Associate professor

The article is dedicated to the issues of improving the legal basis for the fight against prostitution. The author's proposals regarding amendments and additions to the legislation regulating the fight against prostitution will create the preconditions for the correct qualification of the above offense, disclosure of circumstances to be proved, assessment of circumstances aggravating and mitigating liability, and the appointment of a fair administrative penalty.

Բանալի բառեր՝ պոռնկություն, պայքար, իրավական հիմքեր, վարչական պատասխանատվություն
Ключевые слова: проституция, правовые основы, административное наказание.
Key words: prostitution, fight, legal basis, administrative penalty.